ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

"10" ..... 11 ..... 2021թ. N.....2019-Ա.....

ՀՐԱՄԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի 2021 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 6 արձանագրությունը՝ համաձայն հավելվածի:

2. Ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպության ընտրության մրցույթի արդյունքով հաղթող ճանաչված <<Մուլտի Տրանսպորտ>> ՍՊԸ-ին տրամադրել Կոտայքի մարզի միասնական երթուղիների սպասարկման իրավունք 10 տարի ժամկետով:

3. <<Մուլտի Տրանսպորտ>> ՍՊԸ-ի հետ կնքել ժամանակացույց հայտ-պարտավորությամբ ներկայացված քանակով ավտոբուսները ձեռք բերելու վերաբերյալ:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ա. Սիմոնյանին:

11/10/2021

X

ԳՆԵԼ ՍԱՆՈՍՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: SANOSYAN GNEL 1710830069 **Գ.ՍԱՆՈՍՅԱՆ**

Հավելված

ՀՀ տարածքային զարգացման և

ենթակառուցվածքների նախարարի

10.11.2021թ. N 2119-Ա հրամանի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցութային հանձնաժողովի նիստի

05 նոյեմբերի 2021թ. ք. Երևան

2021 թվականի հոկտեմբերի 29-ին կայացավ Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպությունների ընտրության ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության մրցութային հանձնաժողովի նիստ:

Մասնակցում էին հանձնաժողովի՝

նախագահ՝	Ա. Սիմոնյանը
քարտուղար՝	Խ. Սողոմոնյանը
անդամներ՝	Տ. Գասպարյանը
	Ա. Եղիշյանը
	Գ. Հարությունյան

Օրակարգում՝

2021 թվականի հոկտեմբերի 29-ի կայացած Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի արդյունքների ամփոփում:

Քննարկվեց՝

Կոտայքի մարզի միասնական երթուղիների ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի մասնակցության համար հայտ ներկայացրած <<Մուլտի Տրանսպորտ>> ՍՊ ընկերությանը հաղթող ճանաչելու հարցը:

Որոշվեց՝

Ղեկավարվելով <<Ավտոմոբիլային տրանսպորտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի << Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթ անցկացնելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N 762 և 2007 թվականի հունիսի 21-ի N 819-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 1994-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով մրցութային գնահատման և ամփոփ թերթիկները՝

1. Կոտայքի մարզի միասնական երթուղիները սպասարկելու համար կայացած մրցույթի արդյունքում հաղթող ճանաչել <<Մուլտի Տրանսպորտ>> ՍՊ ընկերությանը՝ տաս տարի սպասարկման ժամկետով, Յութոնգ ZK6852HG մակնիշի 2022 թվականի արտադրության 30 հատ, Յութոնգ ZK6729D 2021 թվականի արտադրության 40 հատ, ԳԱԶ A65R36 մակնիշի 2021 թվականի արտադրության 62 հատ և ԳԱԶ A65R36 մակնիշի 2021 թվականի արտադրության 18 հատ տրանսպորտային միջոցներով, ըստ երթուղիների մեկ ուղևորի համար առաջարկված հետևյալ փոխադրավարձերով՝

h/h	Երթուղու անվանումը և համարը	Փոխադրավարձը	Սպասարկման համար պահանջվող ավտոբուսների քանակը
1.	Հրազդան - գ.Հանքավան	500	2
2.	գ.Կարենիս - գ.Աղվերան	300	1
3.	Չարենցավան - գ.Բջնի	250	1
4.	գ.Թեղենիք - Նոր Հաճն	250	1
5.	գ.Բուժական - Եղվարդ	300	1
6.	Չարենցավան - Հրազդան	400	1
7.	Աբովյան - գ.Զովաշեն	500	1
8.	Աբովյան - գ.Սևաբերդ	400	1
9.	Աբովյան - գ.Գողթ	500	2
10.	Աբովյան - Նոր Հաճն	200	1
11.	Հրազդան - Աբովյան	500	1
12.	Աբովյան - գ.Նուռնուս	250	2
13.	Զովունի - Աբովյան	400	1
14.	Եղվարդ - Աբովյան	400	1
15.	Աբովյան - գ.Առինջ	200	2
16.	գ.Զովաբեր - գ.Բջնի	300	1
17.	Չարենցավան - Հրազդան	400	3
18.	Աբովյան - Արգել	400	4
19.	Աբովյան - գ.Գեղաշեն	250	4
20	գ.Աղավնաձոր - Հրազդան	200	1
21.	Եղվարդ - գ.Քասախ	300	1
22.	Աբովյան - գ.Զովք	400	8
23	Հրազդան - Ծաղկաձոր	200	1
24.	գ.Լեռնանիստ - Հրազդան	250	1

25.	գ.Գետամեջ - Երևան	300	8
26.	գ.Նուռնուս - Երևան	400	8
27.	Նոր Հաճն - Երևան	300	8
28.	Աբովյան - Երևան	300	13
29.	Աբովյան - Երևան	300	17
30	գ.Գողթ - Երևան	500	5
31.	Նոր Հաճն - Երևան	300	6
32.	Չարենցավան - Երևան	500	8
33	Հրազդան - Երևան	700	8
34.	Ծաղկաձոր - Երևան	700	1
35	Եղվարդ - Երևան	300	6
			131 փաստացի + 19 պահուստային

2. Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված <<Մուլտի Տրանսպորտ>> ՍՊԸ-ի հետ համատեղ վերանայել երթուղիների ուղեգծերն ու չվացուցակները՝ հաշվի առնելով 2021 թվականի սեպտեմբերի 24-ին ընդունված <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին>> օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին>> ՀՕ-328-Ն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո բնակավայրերի միավորման կամ անջատման արդյունքում ձևավորված նոր համայնքները:

3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հաստատմանը ներկայացնել սույն արձանագրությունը:

Մրցութային հանձնաժողովի՝

նախագահ՝ Ա. Սիմոնյան

քարտուղար՝ Խ. Սողոմոնյան

Տ. Գասպարյան

Ա. Եղիշյան

Գ. Հարությունյան